ԱՐՋՈ ԱՌԻՃԻ ԴՊՐՈՑԸ XIII ԴԱՐՈՒՄ

ԿԱՐԵՆ ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

Անի քաղաքի վերելքի տարիներին նրա շրջակայքում ծաղկեցին տարբեր ժամանակներում կառուցված մի շարք մշակութային կենտրոններ։ Դրանցից նշանավորներն էին Հոռոմոսի վանքը, Բաղնայրը, Խծկոնքը, Արջո Առիճը։ Դրչության և ուսումնակրթական այս կենտրոններն անմիջականորեն ընդգրկվեցին Անիի ընդհանուր զարգացման ոլորտը, ուղղակիորեն կրելով քաղաքային բուռն կյանքի ու ապրելակերպի, անհատական մշակույթի ու արվեստի ազդեցությունները։ Այդ կենտրոնների մշակութային կյանքի պատմության ուսումնասիրությունն ինքնին կարևոր լինելով, որոշակի դեր ունի նաև Անիի պատմության ու մշակույթի հարցերի լուսաբանման առումով։ Տեղում կատարած դիտումներից և բազմամյա ուսումնասիրություններից ելնելով, Թ. Թորամանյանը գրում է. «Անպայման Հոռոմոսի վանքը, Բաղնայր, Արջո Առիճո և անոնց նման 4-են մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերու հետ»[1]։ Քաղաքի մոտակա մեծ ու փոքր բնակավայրերը «ոչ միայն սպասարկում էին տվյալ խոշոր քաղաքը մրթերքներով և հումքով, այլև ունեին իրենց արհեստանոցներն ու շուկան, կապված էին խոշոր քաղաքի հետ տնտեսական, առևտրական բավականաչափ սերտ կապերով»[2]։ Օրինաչափ է նաև այն, որ Անիի և նրա մոտակայքում գտնվող մշակութային կենտրոնների միջև ստեղծվել էր մի ներդաշնակ միասնություն, որն արտահայտվում էր մշակութային գործունեության ամենատարբեր կողմերի համագործակցությամբ։ Այստեղ կանդրադառնանք Անիից 10—12 կմ արևմուտք գտնվող Արջո Առիճի մշակութային կենտրոնի պատմության դրվագներին և XIII դ. գործող դպրոցին։

Տեղադրությամբ Անիից ավելի բարձր և աղբյուրներով առատ վայր է Արջո Առիճը և նրա մոտ գտնվող համանուն (հետագայում՝ Ալաջա) լեռան ստորոտից է տարվել քաղաքի խմելու ջրի մի մասը, որի համար պատրաստված կավաշեն խողովակաշարի հատվածներ են հայտնաբերվել պեղումների ժամանակ[3]։ Արջո Առիճի վանական համալիրը XIX դարում արդեն բավական ավերված է եղել։ Երևի դրանով պետք է բացատրել այդ հուշարձանախմբին վերաբերող նյութերի կցկտուր բնույթը։ Բավական է ասել, որ չի պահպանվել անգամ գլխավոր եկեղեցու հատակագիծը։ Ն. Մարգսյանը, որը հավաքել է 1864 թ. հրատարակել է Արջո Առիճում պահպանված արձանագրությունները, հուշարձանի մասին գրում է. «...մենաստանս, որոյ անհետացեալ իսպառ, գնշխարնալ մասունս եկեղեցւոյն պահէ տակաւին։ Եկեղեցիս այս թէպէտ և մեծութեամբն և հոյակապութեամբ զուգակշիռ չկայցէ ընդ Բագնայր, սակայն և ոչ շատ ստորին է, քան զնա։ Նոյնօրինակ բաժանեալ է և սա ի ներքնագաւիթ և ի տաճար... Բազում էին և սորա արձանագրութիւնք ի ներքնագաւթին, սա-

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 328։

2 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. I, Երևան, 1958, էջ 84։

3 Թ. Հակոբյան, Անիի պատմություն, Երևան, 1980, էջ 247—248, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 52։

կայն շատք խանգարեալ են»[4]։ Գլխավոր եկեղեցու արևմտյան կողմում կառուցված է եղել կամարակապ երկհարկ շինություն, որից նույնպես քիչ բան է պահպանվել[5]։ Արջո Առիճի քիչ թե շատ անվնաս մնացած 10 վիմագիր արձանագրություններում տեղեկություններ չկան ո՛չ վանքի կառուցման թվականի, ո՛չ էլ կառուցողի վերաբերյալ։ Թվակիր արձանագրություններից ամենահինը վերաբերում է 1207 թ., իսկ վերջինը՝ 1289 թ.։ Արջո Առիճի ուխտը Աստվածածնի և Գրիգոր Լուսավորչի անունով է։

Վանքը XIII դարում ունեցել է նաև տնտեսական որոշակի դեր և գործունեության ոլորտ։ Անիի արձանագրություններից մեկում Շիլենց Սարգիս բաժրարը հայտնում է, որ Արջո Առիճի ս. Գրիգորը ազատվում է «բաժ» հարկից, որն ուներ «փոխագրության մաքսային հարկի նշանակություն»[7]։ Իսկ Մրենի արձանագրություններից մեկում (1273 թ.) Անիի նշանավոր մեծատուն Սահմագինը տեղեկացնում է, որ Արջո Առիճի Մրենում և Օշականում գտնվող այգիները ազատում է «խալալ» կոչվող հարկից[8]։ Արջո Առիճի արձանագրություններից երևում է, որ այդտեղ ժամանակին մեծաթիվ հոգևորականություն է եղել («բնակիչք վանացս»). հիշատակվում են նաև վարդապետներ և Գրիգոր անունով եպիսկոպոս[9]։ Բայց արձանագրությունների մեծ մասը նվիրատվական բնույթի է և վանական ընդարձակ կալվածքների ու առատ ինչքի մասին է վկայում։ Վանքին նվիրվել են նաև ձեռագրեր։ Դրանցից մեկը 1211 թ. ընդօրինակված «Հաղբատի ավետարան» կոչվող մատյանն է[10]։ Ձեռագրի գլխավոր հիշատակարանում ստացող անեցի Սահակը գրում է Ավետարանը Արջո Առիճին նվիրելու մասին, միաժամանակ հայտնելով մի արժեքավոր տեղեկություն, որ իր տոհմը այդ վանքում եկեղեցի է կառուցել. «...ով լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արջուառճի, առ որ զյոյս հաւատոյ մեր եղեալ զբովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց՝ ծախեցաք և շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէջ ի վանս Արջուառճի, որպեսզի սուրբ եկեղեցաւս և սուրբ Աւետարանաւս մեք և ծնողքն մեր և եղբարք և ազգականք գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ»[11]։ Ինչպես տեսնում ենք, սկզբում Սահակը գրում է «շինեցաք... եկեղեցիքս», բայց հետո կոնկրետացնում է. «Եկեղեցիս, որ շինեցաւ ի մէջ ի վանս Արջուառճի», այսինքն նրա տոհմը ոչ թե Արջո Առիճի վանքն էր կառուցել, որն անկասկած ավելի հին ծագում ունի, այլ մի եկեղեցի այդ վանքի համալիրի մեջ, ուր և տարվել է վերոհիշյալ ձեռագիրը գրվելուց հետո։

Արջո Առիճում դպրոցի գոյության հարցը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, համապատասխան նյութերի անհայտության պատճառով և, բնականաբար, հայ դպրոցի ու մանկավարժության պատմությանը նվիրված աշխատություններում չենք հանդիպում Արջո Առիճի անվանը[12]։ Այժմ, սակայն, հրապարակված և նորահայտ տվյալները հնարավորություն են ընձեռում խոսել այդ դպրոցի մասին։

---

4 Ն. Սարգսյան, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 190։

5 «Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1970, № 2, էջ 111)։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 3, արձ. № 6։

7 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 88։

8 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ. 1913, էջ 116։

9 Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 191, տե՛ս նաև՝ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 121—123։

10 Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 6288։

11 Գ. Հովսեփյան, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 749 (այս և հաջորդ հիշատակարաններում արված ընդգծումները մերն են—Կ. Մ.)։

12 Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության X—XV դդ., Երևան, 1958, Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, 1946 և այլն։

1298 թ. Անի քաղաքի Ներքին բերդում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում ստացող Հակոբը նշում է, որ ձեռագիրը նվիրվում է Արջո առինի ուխտին. «...զայս Աւետարան, զոր աւանդեցի և ընծայեցի ի բնակած տեղիս մեր՝ ի սուրբ ուխտս Առջևառնեծոռ»[13]։ Այնուհետև հաղորդում է, որ իր Ստեփանոս եղբոր հետ մանուկ հասակից սովորել են Արջո Առինում, ուր և արժանացել են քահանայական ձեռնադրության. «...Յակոբ ի մայրաքաղաքէս Անոյ, հանդերձ աստուածազութ եղբարբ իմ Ստեփաննոսիւ ի մանկութենէ վարժեալ ի սուրբ ուխտս Առջևառնեծոյ. ի դրան սրբոյ Աստուածածնիս և սուրբ Գրիգորո քրիստոսազար սուրբ Նշանիս Յովաննեաւ տաղաւարեալ և յայսմ տեղւոջ ընկալեալ զաւծումն քահանայութեան պարգևաւք»[14]։ Հակոբի հիշատակարանից երևում է, որ նա ծագումով հենց Արջո Առինից էր. «ի բնակած տեղիս մեր» և «ի մանկութենէ վարժեալ» խոսքերը դրա հավաստումն են, թեև բնակվում էր Անիում («Յակոբ ի մայրաքաղաքէս Անոյ»)։ Սակայն արժեքավորն այստեղ վկայությունն է Արջո Առինի ուխտում երկու եղբայրների ուսանելու և նույն տեղում քահանա ձեռնադրվելու վերաբերյալ։ Դա դպրոցի գոյությունն հաստատող ուղղակի փաստ է։ Արջո Առինի դպրոցի մասին հիշատակություն է պահպանվել այդ վանքին XIII դարում նվիրված մեկ այլ ձեռագրում, որից միայն մեկ թերթ է հասել մեր օրերը, որպես XVII դարի մի հայսմավուրքի պահպանակ[15]։ Բարեբախտաբար, այդ քայքայված մագաղաթյա թերթը պարունակում է նախկին Ավետարանի (գրչությունից դատելով՝ XI դարի) հետագայի հիշատակարանի մի հատվածը, ուր նշվում են Անիի և Արջո Առինի անունները, իսկ ձեռագիրը նվիրող Աստվածատուրը իրեն կոչում է Արջո Առինի ուխտի աշակերտ։ Նկատի ունենալով պատառիկի ներկա վիճակը և հիշատակարանի արժեքը, այն մեջ ենք բերում ամբողջությամբ.

էջ ա

«Քրիստոս աստուած քո սուրբ աւետարանչացս բարեխաւսութեամբ ողորմեայ Աստուածատրոյ և զաւակի նորայ Մանուիլայ և հոգևոր մաւր իմոյ Սըլերոյն Արճիշեցի և զաւակաց նորա՛յ, որ նահատակեցան ի տաթարէն, և գրեա զնոսայ ի դպրութեան կենացն յավիտենից և ջնջեայ զձեռագիր յանցանայ նոցայ, և ողորմեա յաստ և ի հանգերձելումն, ամեն»։

էջ բ

«...եայց զնայ որպէս ինքն կամեցաւ։
...սուրբ առաքեալն և աւետարանիչն Քրիստոսի։
...տե[ս]ոբերի ամսոյ և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։
...նուաստ և անարժան քահանա, աշակերտ և...
...ուխտիս Արջուառնո. որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ, որ աւանդեցի զսուրբ [Ավետարանս]
...ի նորին յուխտս, յիշատակ ինձ և ծնողաց մերոց և եղբարց և վարդապետաց...
...ինս և ես...»։

Ինչպես երևում է, հիշատակարանը գրված է 1236 թ. հետո, երբ մոնղոլները գրավեցին Անին և նրա շրջակայքը, քանի որ այստեղ նշվում է Աստվածատուրի մերձավորների նահատակությունը թաթարների ձեռքով «ի տաթարէն»։ Աստվածատուրը իրեն կոչում է Արջո Առինի աշակերտ. հիշատակարանի այդ մասում չպահպանված հատվածը կարելի է վերականգնել. «աշակերտ և [սպասաւոր սուրբ] ուխտիս Արջուառնոյ»։ Ուշագրավ է նաև Արջո Առինի տե-

---

[13] К. Юзбашян. Анийская рукопись 1298 г. («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 80)։ Ձեռագիրը պահվում է Լենինգրադում, արևելագիտության ինստիտուտում, B 44 համարի տակ։

[14] Նույն տեղում։

[15] Մատենադարան, ձեռ. № 1501։

դաղրությունը նշելու եղանակը, ուր ընդգծվում է այդ բնակավայրի սերտ կապն ու մերձությունը Անի քաղաքին. «Արջուառճո, որ ի գրան մայրաքաղաքիս Անոյ»։

Այսպիսով, Արջո Առիճում քահանայական աստիճան ստանալու և վարդապետների հիշատակության փաստերը ցույց են տալիս, որ այստեղ եղել է դպրոց, որտեղ, ուսումնառության համապատասխան շրջան անցնելով, աշակերտները քահանայության աստիճան էին ստանում։ Ուսումնական այդ կենտրոնի գործունեությունը ծավալվել է XIII դարում։ Վերը թվարկված երեք ձեռագրերի նվիրաավությանը վերաբերող հիշատակությունները վկայում են, որ վանքին կից եղել է գրագարան, որից հավանորեն օգտվել են նաև դպրոցի սաները։

Արջո Առիճում դպրոցի գոյության հանգամանքը ղդալիորեն լրացնում է մեր գիտելիքները Անիի մերձակա շիրակյան այդ բնակավայրի վերաբերյալ։ Այն կարևոր է Արջո Առիճի մշակութային կենտրոնի գործունեության, ինչպես և բուն հուշարձանի պատմության հետագա ուսումնասիրության տեսակետից, միաժամանակ միջնադարյան հայ դպրոցի պատմությունը հարստացնում է մի նոր գրվագով։

АРДЖО-АРИЧСКАЯ ШКОЛА В XIII ВЕКЕ

КАРЕН МАТЕВОСЯН

Резюме

Средневековое армянское поселение Арджо-Арич находится близ города Ани. В рукописи, написанной в 1298 г. в г. Ани (ныне хранящейся в г. Ленинграде), есть памятная запись, содержащая сведения о существовании школы первой ступени при монастыре Арджо-Арич. Заказчик рукописи Акоп сообщает, что он вместе с братом Степаносом после обучения в школе Арджо-Арича были посвящены в сан в том же монастыре. В другой памятной записи, уцелевшей на фрагменте в целом не сохранившейся рукописи (написанной после 1236 г.), некий Аствацатур называет себя учеником арджо-аричской школы. Указанные сведения дают основание утверждать, что в XIII в. в Арджо-Ариче существовала школа.